[redacted]

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 2-րդ ենթակետի **բ. պարբերությունը**, 6 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատված համարել ավագ բուժաշխատող Անդրեյ Ավոյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների խախտումը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Անդրեյ Ավոյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն **խիստ նկատողություն** տալու առաջարկությամբ դիմել համապատասխան իրավասու անձին:

2.Ավագ բուժաշխատող Անդրեյ Ավոյանին առաջարկել անհապաղ՝ շարունակական մասնագիտական զարգացման շրջանակում, ՀՀ օրենսդրության

պահանջներին համապատասխան անցնել բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների վերաբերյալ դասընթաց:

3.Սույն որոշման եզրափակիչ մասը տրամադրել բուժաշխատողների ռեգիստրին՝ ՀՀ օրենսդրության համաձայն ռեգիստրի պաշտոնական կայքի հանրության համար հասանելի հատվածում տեղադրելու նպատակով:

4.Սույն որոշումը կողմերի կողմից կարող է բողոքարկվել Հանձնաժողովին՝ այն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 25-րդ կետի համաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ՝
ՆԱԽԱԳԱՀ՝ **ԻԶԱԲԵԼ ԱԲԳԱՐՅԱՆ**